ԹԵՄԱԿԱՆ-ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

Վիեննա.

Վերջերս Վիեննայում տեղի են ունեցել հայոց համայնքային ժողովի վարչության ընտրությունները:

Օրվա ընդհանուր ժողովին նախագահել է Ա. Գավալճյանը և քարտուղարի պաշտոնը կատարել դոկտ. Ե. Զատեյանը: Իսկ ընտրության հսկիչ անդամներ են նշանակվել Ժիրայր Վարդանյանը, Ավետիս Տետեյանը և Կարպիս Փափազյանը:

Օրվա ընտրության արդյունքը եղել է հետեվյալը.

Նուպար Վարդյան՝ ատենապետ.

Արամ Ութուճյան՝ փոխ-ատենապետ.

Դոկտ. Մանֆրետ Վարդյան՝ Ա ատենադպիր.

Մարկոս Թարյան՝ Բ ատենադպիր.

Ավետ Տետեյան՝ Ա գանձապահ.

Լևոն Ծերունյան՝ Բ գանձապահ.

և պահեստի անդամներ են ընտրվել.

Տիկին Դիպլոմ-Գաուֆման Անահիտ-Վալենտին Ասլանյան.

Դոկտ. Վահե Պալճյան.

Վերատուգիչ հանձնաժողովի անդամներ են ընտրվել.

Դոկտ. Երվանդ Զատեյան.

Լևոն Սահակյան:

Ավստրիայի հայոց հոգևոր հովիվ դոկտ. տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանն ի պաշտոնե անդամ է վիեննահայ եկեղեցական համայնքի:

Միլան.

Միլան քաղաքում ևս տեղի է ունեցել իտալահայ եկեղեցական վարչության տարեկան ընդհանուր ժողովը և կազմվել եկեղեցական նոր հոգաբարձություն հետևյալ կազմով.

Երվանդ Հյուսիսյան՝ ցկյանս պատվո նախագահ.

Բժ. Տիգրան Ալեքսանյան՝ ատենապետ.

Բժ. Օննիկ Ավագյան՝ փոխ-ատենապետ.

Կարապետ Հինոյան՝ ատենադպիր.

Վահե Փափազյան՝ գանձապահ.

Երվանդ Երիցյան՝ խորհրդական,

իսկ օժանդակ անդամ և դպրապետ է նշանակվել՝

Հրանտ Փափազյան:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը, հանուն Վեհափառ Հայրապետի, ջերմորեն շնորհավորում է վիեննահայ և միլանահայ համայնքների նորընտիր եկեղեցական խորհուրդներին, բարեմաղթում նրանց եկեղեցաշեն և ազգօգուտ գործունեություն՝ Մայր Աթոռ ս. Էջմիածնի հովանու և օրհնության ներքո: